

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 35/5

8 սեպտեմբերի 2015 թ.

Քննարկվեց քաղաքացի Նազելինա Դանիելյանի 24.07.2015 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի 26.05.2015 թ-ի թիվ 2574 որոշման դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետը, քննարկելով քաղաքացի Նազելինա Դանիելյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 01.02.2014 թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 1.274.004 դրամ, որից ԱԱՀ-ի գծով ապառք 500.100 դրամ, տույժ 273.804 դրամ, տուգանք 500.100 դրամ: Նշված պարտավորությունն առաջացել է 16.03.2012 թ-ին «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն իրականացված ապրանքի մատակարարում համարվող գործարքից (անձնական օգտագործման ավտոմեքենայի օտարում): Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի կողմից 26.05.2015 թ-ին ընդունվել է թիվ 2574 որոշումը Նազելինա Դանիելյանից 1.274.004 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Նշվեց նաև, որ ՀՀ ՖՆ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչությունում փաստաթղթեր են ստացվել քաղաքացի Նազելինա Դանիելյանի վերաբերյալ, որոնք անմիջականորեն առնչվում են սույն բողոքին:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ քաղաքացի Նազելինա Դանիելյանի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Քաղաքացի Նազելինա Դանիելյանի 24.07.2015 թ-ի դիմում-գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ